Գործ թիվ ԵԴ/64075/02/22

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

18.01.2023թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա.Պետրոսյանս, ուսումնասիրելով հայցվոր Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայցադիմումը և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Հայցվոր Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի Ա/Ձ-ն հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ պատասխանող Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի 15.11.2022թ. թիվ 3939-Ա որոշումը՝ Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով, անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը դատավոր Ա.Պետրոսյանի աշխատակազմին է հանձնվել 08.12.2022 թվականին:

Դատարանի 13.12.2022թ. որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցվորը հայցադիմումը կրկին դատարան է ներկայացրել եռօրյա ժամկետում՝ 10.01.2023 թվականին, որը դատավոր Ա.Պետրոսյանի աշխատակազմին է հանձնվել 13.01.2023 թվականին:

Հայցվոր Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի Ա/Ձ-ն հայցադիմումով միաժամանակ միջնորդել է գործը քննել դատական նիստում:

Հայցվորի կողմից պահպանվել են հայցադիմումի ձևին, բովանդակությանը և կցվող փաստաթղթերին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121, 122 հոդվածներով առաջադրվող պահանջները:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է

[illegible] կարող է լուծվել առանց [illegible]։

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայցվոր Եղիաբեթ Ալմազյան Սամվելի Ա/Ձ-ն հայցադիմումով միջնորդել է գործը քննել դատական նիստում, ուստի Դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասը, գտնում է, որ թիվ ԵԴ/64073/02/22 քաղաքացիական գործով պետք է հրավիրել դատական նիստ:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածների պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:
2. Որոշումը սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց և «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:
3. Սույն գործով հրավիրել դատական նիստ 2023թ. փետրվարի 24-ին ժամը 15:30-ին:
4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ